Հավելված 1
Հայաստանի Հանրապետության հատուկ
քննչական ծառայության պետի
23. 10. 2018թ. թիվ 18-Լ հրաման

Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր
ՀՀ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է ՀՀ հատուկ քննչական ծառայության ծառայողների (այսուհետ՝ ՀՔԾ ծառայողների) 2019թ. կրթական չափորոշիչները, վերապատրաստման ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամանակացույցը, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է ՀՀ հատուկ քննչական ծառայության պետի 2018թ. հոկտեմբերի 23-ի թիվ 18-Լ հրամանի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է ՀՔԾ ծառայողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը քրեական իրավունքի, քրեական դատավարության, ՄԻԵԴ իրավական դիրքորոշումների, խոշտանգումների և կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով:

5. Վերապատրաստումն իրականացվում է երկու խմբով՝ 30 ակադեմիական ժամ ծավալով: Յուրաքանչյուր խմբի ուսումնառության տևողությունը 4 շաբաթ է: Ուսումնառությունը իրականացվում է շաբաթ օրերին:

6. Վերապատրաստումն իրականացվում է՝ 1-ին խումբ մարտի 09-ից 30-ը, 2-րդ խումբ՝ ապրիլի 06-ից 27-ը:

II. Դասավանդվող առարկայական կուրսերի (դասընթացների) ցանկ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	Sl-Q-032-19	Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդի հիմնահարցեր	4
2.	Sl-Q-039-19	Կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր և կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան	6
3.	SI-Q-056-18	Խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման արդի հարցեր	4
4.	Sl-Q-080-19	Ընտրական հանցագործությունների որակումը և քննության մեթոդիկան	4
5.	Sl-Q-081-19	Հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցագործության որակումը և քննության մեթոդիկան	6
6.	Sl-Q-082-19	Հանցավոր ճանապարհով ձեռք բերված և արտասահմանում գտնվող գույքի, ակտիվների և այլ արժեքների վերադարձման հիմնախնդիրները	6

1. Sl-Q-032-19. Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության արդի հարցերը

Դասընթացն անհրաժեշտ է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին վերաբերող իրավակարգավորումների վերաբերյալ գիտելիքների հաղորդման և դրանք կենսագործելու կարողությունների ու հմտությունների կատարելագործման համար:

Դասընթացը ներառում է նախնական և հետագա դատական վերահսկողության խնդիրները, քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների նկատմամբ դատական վերահսկողության առանձնահատկությունները, խափանման միջոց կալանքի կիրառման և ժամկետի երկարացման պայմանները և հիմքերը, կալանավորման հարցի դատական քննության, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործնական հարցերը:

2. Sl-Q-039-19 Կոռուպցիայի դեմ պայքարի արդի հարցեր և կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկան

Դասընթացը պայմանավորված է կոռուպցիոն հանցագործությունների առանձին տեսակների որակման և քննության մեթոդիկայի, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցության վերաբերյալ գիտելիքների կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

- հակակոռուպցիոն պայքարի միջազգային իրավական կարգավորումները, այդ թվում՝ Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) և Եվրախորհրդի Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հանձնաժողովի (ՄՈՆԻՎԱԼ) հանձնարարականները), վերջիններիս անդամակցող պետությունների կողմից ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ հարցերը,
- հակակոռուպցիոն պայքարի ներպետական իրավական կարգավորումները, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ, 309-րդ, 311-րդ, 312-րդ, 314-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի և կոռուպցիոն այլ հանցագործությունների քրեաիրավական բնութագրերը, որակման առանձնահատկությունները, ինչպես նաև դատական պրակտիկայում առկա իրավական դիրքորոշումները, կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկայի առանձ-նահատկությունները:
- Ապօրինի հարստանալու քրեաիրավական բնութագիրը և քննության մեթոդիկան
- Հայտարարագրման պարտականության խախտման հետ կապված հանցատեսակների (քր.օր. հոդվածներ 314.2,314.3) քրեաիրավական բնութագիրը և քննության մեթոդիկան

3. SI-Q-056-19. Խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման արդի հարցեր

Դասընթացը պայմանավորված է խոշտանգման և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի չենթարկվելու իրավունքի ապահովման օրենսդրական պահանջների, միջազգային չափանիշների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթաց ներառում է խոշտանգումների արգելքի, դրա կանխարգելման, արձանագրման և արդյունավետ բացահայտման, Ստամբուլի արձանագրության չափանիշներին համապատասխան խոշտանգումների ու վատ վերաբերմունքի հետքերի փաստագրման վերաբերյալ հարցերը:

4. Sl-Q-080-19. Ընտրական հանցագործությունների որակումը և քննության մեթոդիկան

Դասընթացն անհրաժեշտ է անձի ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով քրեական օրենքի ճիշտ կիրառման, քննության մեթոդիկայի վերաբերյալ գիտելիքները և հմտությունները կատարելագործելու ու պրակտիկայում դրանք պատշաճ կենսագործելու կարողություններ ձևավորելո համար:

Դասընթացը ներառում է.

- անձի ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալիստիկական բնութագրերը,

- անձի ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների որակման առանձնահատկությունները, հարակից հանցակազմերը միմյանցից սահմանազատելու հիմնահարցերը,
- անձի ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները

5. Sl-Q-081-19. Հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցագործության որակումը և քննության մեթոդիկան

Դասընթացը պայմանավորված է հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) հանցատեսակի որակման և քննության մեթոդիկայի, ինչպես նաև փողերի լվացման դեմ պայքարի ոլորտում միջազգային համագործակցության վերաբերյալ գիտելիքների կատարելա-գործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝ հանցավոր ճանապարհով ստացված գույքի օրինականացման (փողերի լվացում) դեմ պայքարի միջազգային իրավական կարգավորումները, այս հանցագործության քրեաիրավական բնութագիրը, հարակից հանցակազմերի սահմանազատման և հարաբերակացության հիմնահարցերը, փողերի լվացման հանցագործության որակման հիմնախնդիրները, ինչպես նաև այս գործերի քննության մեթոդիկայի առանձնահատկությունները:

6. Sl-Q-082-19. Հանցավոր ճանապարհով ձեռք բերված և արտասահմանում գտնվող գույքի, ակտիվների և այլ արժեքների վերադարձման հիմնախնդիրները

Դասընթացը պայմանավորված է հանցավոր ճանապարհով ձեռք բերված և արտասահմանում գտնվող գույքի, ակտիվների և այլ արժեքների վերադարձման հնարավրությունների, իրավական կարգավորումների, ինչպես նաև այս ոլորտում միջազգային համագործակցության վերաբերյալ գիտելիքների կատարելագործման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝ հանցավոր ճանապարհով ձեռք բերված և արտասահմանում գտնվող գույքի, ակտիվների և այլ արժեքների վերադարձման հնարավրությունների, այս ոլորտում առկա իրավակարգավորումների և միջազգային համագործակցության վերաբերյալ հարցերը: